Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

37(324)
31.12.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ Lusarar

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ԱՄԱՆՈՐ՝ ԱՌԱՆՑ ԱՊԱՌԻԿ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրկին Ամանորի շեմին ենք, և կրկին հայտնվել ենք նախատոնական վազվզուքի մեջ: Առաջնահերթ հարցերն են՝ ինչպե՞ս զարդարել տոնական սեղանը, ի՞նչ նվիրել մեզ համար ամենասիրելի մարդուն և այլն: Քաղքենիությո՞ւն է սա... Նման հարց ինքներս մեզ չենք տալիս, որովհետև ամենքս հստակ գիտենք, որ այդով ընդամենը ներկայացնում ենք հայի՝ մեր ազգային հատկանիշը: Կարծես պարտադիր պահանջ է՝ ամանորյա սեղանները լինեն ուտելիքներով ծանրաբեռ, անկախ այն բանից՝ մեր գրպանի պարունակությունը նման շռայլություններ թույլ տալի՞ս է, թե՝ ոչ: Պատասխանը պարզ է դառնում տոներից անմիջապես հետո, երբ սպառված ենք տեսնում առնվազն տվյալ ամսվա մեր նյութական խնայողությունը: Ասել է թե՝ արդեն իսկ տարեսկզբից սկսում ենք ապրել... սեփական գրպանից պարտք առնելով, էլ չենք խոսում այն մասին, որ բնակչության ոչ սակավաթիվ մի հատված տոնական սեղանի համար ուտեստները խանութներից ձեռք է բերում ապառիկ:

Մեր բանահյուսական աղբյուրները բնավ տվյալներ չեն փոխանցում Ամանորի շքեղ տոնանշման մասին, իսկ այլ ժողովուրդների սովորույթներն անհամեմատ համեստ են իրենց դրսևորումներով: Ուրեմն ինչի՞ է պետք տոնական այս մրցավազքը՝ թե ում սեղանն ավելի ճոխ կլինի, կամ ով ավելի շուքով կնշի իր բաժին Ամանորը: Այո, Նոր տարին հավասարապես բոլորինն է և մյուս տոներից տարբերվում է իր համընդհանրությամբ: Մեծ թե փոքր, տարեմուտին թաքուն երազանք են ունենում, որի իրականացումը կուզենային տեսնել նոր սկսվող տարում: Սա պարզ մարդկային ցանկություն է, որից զերծ չէ ոչ մի բանական էակ: Ամենալավ նվերը Ամանորին անկեղծ բարեմաղթանքն է՝ զուգորդված հաճելի ժպիտով: Իսկ որ հայերս ուրախ ժողովուրդ չենք (իմա՝ իրար քիչ ենք ժպտում), հայտնի ճշմարտություն է: Ըստ «Ազգ» օրաթերթի, որը հենվել է Gellup-ի անցկացրած հարցախույզի տվյալների վրա, հայերն աշխարհի ամենատխուր ազգերի եռյակում են: Թե ինչու՝ դա արդեն այլ քննարկման թեմա է, բայց ինչո՞ւ Ամանորին բոլորս՝ ծանոթ-անծանոթ, չփորձենք իրար ժպտալ, հոգու ջերմություն փոխանցել միմյանց, որպեսզի տարին սկսվի ժպտադեմ լավատեսությամբ: Ոգելից խմիչքը չէ բարձր տրամադրության հարուցիչը, այլ սրտից սիրտ փոխանցվող բարությունը, ջերմությունն ու սերը:

2013 թվականը հատկանշական է լինելու ոչ միայն նրանով, որ սև օձի տարի է կոչվելու: Օձի իմաստություն, անկասկած, մեզ պետք է, սակայն արցախցիներիս համար եկող տարին կշեշտվի առաջին հերթին Արցախյան շարժման քառորդդարյա հոբելյանով, որը պետք է տոնենք համաժողովրդական խանդավառությամբ ու մեր միասնական ոգու վերահաստատմամբ: Հենց այս հրաշալի հեռանկարով ոգևորվենք՝ տոգորված մնալով Շարժման անխոտոր գաղափարաբանությամբ: Եվ եթե անձնական երազանքներ ունենք, դրանց իրականացումը ևս տեսնենք մեր ընդհանուր հաջողությունների համատեքստում: Թող մեր օջախներում հոգու խրախճանք լինի՝ առանց ապառիկ ուրախությունների: Գնահատենք մեր իրական հնարավորությունները և կարողանանք ուրախանալ՝ բազմահազար ժպիտներ փոխանցելով իրար:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

**Սիրով եւ սրտանց՝**
**«ԼՈՒՍԱՐԱՐԻ» խմբագրակազմ**

## ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

Սիրելի գործընկերներ

Անցնող տարվան հրաժեշտ տալուց առաջ ամեն մեկս մի պահ մտովի ետ ենք նայում՝ վերագնահատելու կատարածն ու վերաիմաստավորելու հետագա անելիքները: Այս առումով կարող ենք փաստել, որ ինչպես կենսական մյուս բնագավառներում, կրթության ոլորտում նույնպես շոշափելի հաջողություններ են արձանագրվել: Դա ակնառու է հատկապես դպրոցաշինության ծավալների ընդարձակման գործընթացում, որը մեր երկրի իշխանությունների ռազմավարական առաջնահերթություններից է: Միաժամանակ, խոստովանենք, դեռևս անելիքներ ունենք կրթության որակի բարձրացման ուղղությամբ: Հեռանկարների ճիշտ գնահատմամբ և բոլորիս ջանքերը համախմբելով՝ վստահ եմ, կհաղթահարենք նաև այդ խնդիրները:

Կարևորելով մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու գործում կրթության բնագավառի աշխատողների դերակատարությունը՝ միանշանակորեն շեշտում ենք պետության և ժողովրդի կողմից տրվող բարձր գնահատականը: Այս համատեքստում պակաս կարևոր չէ նաև մասնագիտական կրթության ոլորտում գործունեություն իրականացնող մեր դասախոսների առաքելությունը, որը նպատակամղված է երկրի համար անհրաժեշտ մասնագետներ պատրաստելուն: Ասել է թե՝ կրթագիտական բնագավառում ունեցած ձեռքբերումներն, իրավամբ, կազմում են մեր բոլոր հաղթանակների բաղկացուցիչը:

Հավատանք, որ գալիք տարին նոր հաղթանակների ու հաջողությունների տարի է լինելու: Այս լավատեսությամբ էլ 2013 թվականին նորանոր հաջողություններ եմ մաղթում ձեզ: Թող ձեր բոլորի ընտանիքներում իշխեն սերը, խնդությունը և մարդկային պարզ երջանկությունը:

Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ:



## ԱՄԱՆՈՐՅԱ ԱՂՈԹՔ

Արի՛, բարի իմ Նոր տարի,
Աշխարհին բեր շունչ մի բարի,
Նոր երազանք և նոր խոստում,
Հին երազներ, նոր արթնացում,
Անմար, անափ, անհատակ սեր
Ու կրակվող անշեղ հույսեր:

Հայրենիքին մեր հնամյա
Եվ հավատին մեր նորօրյա
Նոր ու հզոր լույս պարգևիր:
Արարատի վրա լուսեղ,
Հայաստանի վրա գունեղ
Բարիք շաղիր, այնքա՜ն բարիք,
Որքան հայը ունի տարիք:

Եվ Արցախից մինչև Սասուն
Կանաչ լույսով ուղի բացի՛ր,
Արև վառիր նոր ու հզոր...
Ու հիացիր քո արածով,
Բարի՜, բարի իմ Նոր տարի:

**Երազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԻՄՔ՝ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Ամանորյա հարցազրույց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի հետ*



*- Տարեվերջին սովորաբար յուրաքանչյուրը հետհայաց է ձգում արած-թողածին: Պարոն Ասրյան, ինչպիսի՞ն էր տարին կրթական համակարգի համար, ի՞նչ ձեռքբերումներ կարող եք նշել:*

- Իր վերջնամուտին մոտեցավ 2012 թվականը: Կարելի է ասել, կրթության ոլորտում մենք ունեցանք որոշակի հաջողություններ: Առաջինն այն է, որ մեր ուսումնական հաստատությունները տվեցին 12-ամյա կրթության առաջին շրջանավարտներին՝ 1762 հոգի, որից 705-ը՝ խորացված հոսքային ուսուցմամբ: Գոհացուցիչ էին ավագ և խորացված՝ հոսքային ուսուցմամբ շրջանավարտների միասնական քննությունների արդյունքներով բուհեր ընդունվողների ցուցանիշները: ԱրՊՀ ընդունվել է 561 դիմորդ, ՀՀ պետական բուհեր՝ 84, ընդամենը՝ 645, որից 407-ը կամ 63%-ը հոսքային ուսուցմամբ շրջանավարտներ են: ԱրՊՀ անվճար ուսուցմամբ ընդունված 215 դիմորդներից 132-ը կամ 65%-ը նույնպես խորացված ուսուցմամբ շրջանավարտներ են: Ասել է թե՝ ավագ դպրոցը տվել է սպասված արդյունքը. ընդհանուր թվի մեջ 65%-ը հուշում է, որ իրոք, այդ քաղաքականությունը ճիշտ է ընտրված, չնայած գիտենք, որ անելիքներ դեռ շատ ունենք, որ ավագ դպրոցներն իրենց խնդիրներն առաջիկա տարիներին դեռ պետք է իրականացնեն: Կարևորն այն է, որ սկիզբը դրված է, արդյունքները գոհացուցիչ են, աշխատանքները պետք է շարունակել:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ աստիճանաբար մեր կրթական ոլորտ մուտք են գործում նոր տեխնոլոգիաներ: Մենք գիտենք, որ դպրոցներում ստեղծված են տեղեկատվական ժամանակակից կաբինետներ, իհարկե, ոչ բոլոր դպրոցներում, բայց բոլորն էլ ունեն որոշակի թվով համակարգիչներ: Այս ամենը հնարավորություն է տալիս առաջին հերթին ինֆորմատիկա առարկայի ուսուցումը պատշաճ կազմակերպել, ինչպես նաև այդ տեխնոլոգիաները կիրառել մյուս առարկաների ուսումնական ծրագրերի ուսուցման ժամանակ: Այս տարի, շնորհիվ մեր ստեղծած կապերի, հայաստանյան և արտասահմանյան որոշ կազմակերպություններ սկսել են իրենց գործունեությունը ծավալել մեր հանրապետությունում, և հանրակրթական դպրոցներից մինչև միջին մասնագիտական ու բուհական համակարգ՝ մենք արդեն որոշակի խնդիրներ ենք առաջադրել և հիմքեր ստեղծել: Նախ՝ որպեսզի սովորողներին ժամանակակից տեխնոլոգիաներին մասնակից դարձնենք, որ հետագայում նրանց համար որպես առանձին մասնագիտություն, հիմք հանդիսանան, ինչպես նաև նոր ստեղծված աշխատատեղերում նրանք կարողանան լիարժեք աշխատանքային գործունեություն ծավալել: Արդեն գործում է «Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագիրը Ստեփանակերտի, Շուշիի և Քարին տակի դպրոցների համար. 1-5-րդ դասարանների սովորողները ստացել են անհատական համակարգիչներ, որոնք օգտագործում են ուսուցման պրոցեսում: Ճիշտ է, այստեղ կան որոշակի թերացումներ՝ կապված այդ համակարգիչների համեմատաբար փոքր հզորության հետ, բայց որպեսզի մեր դասվարները լիարժեք կարողանան տիրապետել, ձեռնամուխ եղանք նաև նրանց, այսպես ասած, լրացուցիչ վերապատրաստմանը: Այս գործում մեզ օժանդակեցին Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ուսուցիչները, որոնք երեք օր Ստեփանակերտում էին: Այնուհետև դասվարների մի խումբ Երևանում տեղում ծանոթացավ՝ ինչպես է նրանց մոտ կատարվում համակարգիչների օգտագործումը ուսումնական ծրագրերի ուսուցման մեջ:

Իսկ բուհական համակարգի առումով մի շարք կազմակերպությունների հետ, հատկապես «Սինոպսիս Արմենիա»-ի, պայմանավորվածություն է ձեռք բերվել ժամանակակից միկրոէլեկտրոնային տեխնոլոգիաների գծով բարձրորակ մասնագետների պատրաստման ուղղությամբ, որը հետագայում հիմք կստեղծի այդ ոլորտում նոր աշխատատեղերի բացման համար: Դպրոցականների շրջանում տարբեր ծրագրեր են իրականացվում. աշակերտներն արդեն նախաձեռնում են ուսումնական ծրագրեր՝ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Նաև ռոբոտային սարքերի ստեղծման խնդիրներն ենք առաջադրում, որ երեխան ստեղծի ռոբոտիքս: Սրան զուգահեռ, նոր համակարգչային կաբինետներ ենք ստեղծում, հիմնականում՝ բարերարների միջոցներով: Մի խոսքով, ժամանակի հետ ցանկանում ենք համաքայլ ընթանալ՝ ուսման որակի և արդյունավետության բարձրացման համար:

2012-ին նորություն էր դպրոցում շախմատ առարկան. սա նույնպես կարևորում ենք: Պետք է նաև այդ խաղին տիրապետեն դպրոցներում, ինչը կնպաստի սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը: Շախմատը՝ ☞2

ԱՄՓՈՓՈՒՄ

# ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՀԻՄՔ՝ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 ☜ որպես ինտելեկտուալ խաղ, մեր ազգի մեջ արմատավորված է, և միջազգային ասպարեզներում մեր հայրենակիցները հաջողության են հասնում: Հուսանք, որ նրանց շարքում շուտով կլինեն նաև Արցախի ներկայացուցիչներ:

Նախադպրոցական կրթության ոլորտում որոշակի աշխատանքներ են կատարվել. միջին և ավագ խմբերում ներդրվել են նոր ուսումնական ծրագրեր: Արտադպրոցական կրթության ոլորտում ավելացվել են սովորողների հնարավորությունները բազմաբնույթ խմբակներում: Այս տարի Շահումյանի շրջանում բացվեց մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը, և դրանք արդեն բոլոր շրջաններում կան:

Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտում միջոցներ են ձեռնարկվել նոր պահանջների առաջադրման, ուսման որակի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև կոռուպցիոն երևույթների վերացման ուղղությամբ: Այստեղ առաջին հերթին կարող ենք շեշտել միասնական քննությունների ձևով, թափանցիկ և օբյեկտիվ, առանց մարդկային գործոնի բուհական ընդունելության կազմակերպումը: Եվ այն, որ բոլոր ընդունվածների մոտ զգալիորեն նկատվել է կայուն գիտելիքների ցուցաբերում. միջին միավորը եղել է ավելի բարձր, եղել են շրջանավարտներ, ովքեր ստացել են ավելի բարձր և առավելագույն՝ 20 միավոր: Այս մի քանի ամսվա հետազոտությունները ցույց են տվել դրա իրավացիությունը: Կոնկրետ ԱրՊՀ դասախոսները վկայում են, որ բոլոր մասնագիտությունների գծով նման ընդունելություն երկար տարիներ բուհը չի ունեցել: Այստեղ էլ շեշտում ենք ավագ դպրոցի դերը, որ հիմք է հանդիսացել աշակերտների պատրաստվածությունը ավելի բարձր մակարդակի վրա դնելու:

Սրանք են 2012 թվականի հիմնական հաջողությունները: Գումարենք կազմակերպչական, կարգապահության ամրապնդման, ֆինանսատնտեսական գործունեության որոշ հարցեր: Նման կարգի բազմաթիվ ստուգումներ և վարչարարական միջոցներ են կիրառվել, որպեսզի ոլորտում լինի կայուն և արդար գործելաոճ:

*- Ճիշտ է, Դուք նոր եք նշանակվել այդ պաշտոնում, բայց համակարգում նոր մարդ չեք: Ինչպես ասում են, մինչև ուղնուծուծը ծանոթ եք, և միշտ էլ Ձեր կարծիքը վճռորոշ է եղել առանցքային հարցերի լուծման համար: Այժմ ոլորտի թիվ 1 պատասխանատու լինելը կաշկանդո՞ւմ, թե՞ ավելի ազատ գործելու հնարավորություն է տալիս:*

- Կրթության ոլորտում աշխատում եմ 1970 թվականից, սկսել եմ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, դպրոցի փոխտնօրեն, Ստեփանակերտի կրթության բաժնի տեղակալ, կրթության և գիտության նախարարությունում կրթության և գիտության վարչության պետ, նախարարի տեղակալ: Պաշտոնների այս հաջորդականությունը, իմ աշխատանքային փորձը, ոլորտին քաջատեղյակ լինելը օժանդակում են, որ նախարարի պաշտոնում, կաշկանդվածություն չդրսևորվի: Անկասկած, փոխնախարարի և նախարարի պաշտոնները պատասխանատվության առումով տարբեր են: Նախարարի պաշտոնում ավելի պատասխանատու ես զգում, որովհետև պատասխան ես տալիս ամբողջ ոլորտի գործունեության համար: Պարզապես իմ աշխատանքային փորձը և մասնագիտական կարողությունները հնարավորություն կտան, որպեսզի և՛ կարողանամ ժամանակին իրականացնել պետական ծրագրերով ամրագրված աշխատանքները, և՛ համակարգը միշտ գործուն հիմքերի վրա պահել: Դա, իհարկե, ինձ կհաջողվի իմ գործընկերների և ամբողջ համակարգի աջակցության շնորհիվ: Նաև ասեմ, որ կրթության ոլորտի ցանկացած խնդրում իրենց աջակցությունն են բերում նաև մեր իշխանությունները, և բարձրացված յուրաքանչյուր հարց հնարավորության սահմաններում գտնում է իր լուծումը: Իսկ այնպիսի հիմնական խնդիրներում, ինչպիսիք են նախադպրոցական և հանրակրթական, ինչու չէ, նաև միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում ուսումնանյութական բազայի համալրման, ուսումնական շենքերի վերանորոգման, կառուցման գլոբալ հարցերը, իհարկե, պետության հետ մեկտեղ տարբեր հիմնադրամներ են իրենց աջակցությունը բերում:

*- Կրթական հարցերով զբաղվող ՀՀ պատվիրակության հետ համատեղ ԼՂՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովի նախաձեռնությամբ վերջերս Արցախում տեղի ունեցած քննարկումների ժամանակ Դուք հանդես եկաք մի շարք առաջարկություններով, որոնց մեծ մասի հետ ՀՀ ԿԳ նախարարը համաձայն էր: Ի՞նչ ընթացք կունենան դրանք:*

- Հաշվի առնելով, որ ՀՀ-ի հետ մենք գտնվում ենք միևնույն կրթական տարածքում, ես մի քանի առաջարկություններ եմ ներկայացրել, որոնք հիմնականում ամրագրված չեն գործող օրենքներում, և դրանց մի մասն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի օրենսդրական փոփոխություններ կատարել: Սակայն իմ արած առաջարկությունները հիմնականում բխում են նրանից, որ ձևականությունը հաղթահարվի և, ի շահ սովորողների, որոշ հարցեր գտնեն իրենց լուծումը: Դրանք ընդամենը առաջարկություններ են, և եթե ընդունվեն և՛ ՀՀ-ում, և՛ մեզ մոտ, կարող են իրականություն դառնալ: Ինձ համար ուղղակի ուրախալի է, որ մեր մանկավարժներն արդեն սկսել են քննարկել, իրենց կարծիքը հայտնել: Հիմնականում երևի համամիտ կլինեն ինձ հետ, որովհետև այդ առաջարկություններն անմիջականորեն մեր աշխատանքից են բխում և իրատեսական են ու ապագայում պետք է իրենց լուծումը գտնեն: Ես չեմ կարևորում, թե դրանց որ մասը կիրականացվի: Բոլոր դեպքերում միշտ պետք է միտքը լինի, այնուհետև գտնի իր իրականացումը:

*- 2013-ի պետական բյուջեով շուրջ 300 մլն դրամով ավելացել են կրթությանը հատկացվող միջոցները: Ինչի՞ վրա կծախսվեն դրանք:*

- Ավելացումը հիմնականում կատարվել է նվազագույն աշխատավարձի, ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերի բարձրացման, ինչպես նաև դպրոցների պահպանման ծախսերի համար. մեկ աշակերտի հաշվով 300 դրամ ծախսն ավելացվել է 200 դրամով: Նախադպրոցական խմբերի դաստիարակների աշխատավարձը հավասարեցվել է ուսուցչի աշխատավարձին: Ավելացվել են դպրոցների ջեռուցման ծախսերը՝ կապված հզոր կաթսայատները մասնագիտացված կառույցներին հանձնելու հետ: Գումարներ են ավելացվել որոշ ծրագրերում՝ ուսուցիչների վերապատրաստման, դասագրքերի, մեթոդական գրականության ձեռքբերման ուղղությամբ:

2012-ի կարևոր իրադարձություն էր նաև ուսուցիչների ատեստավորման գործընթացի իրականացումը և այդ նպատակով նրանց վերապատրաստումը, որը կրելու է պարբերական բնույթ. յուրաքանչյուր տարի բոլոր ուսուցիչների 20%-ը ենթակա է ատեստավորման: Իսկ ատեստավորվածներն էլ արդեն իրենց ցանկությամբ կներկայացվեն տարակարգի:

Նոր տարում կշարունակվեն հին ծրագրերը: Նոր տարվա խնդիրներն արտացոլված են նախարարության 2013թ. աշխատանքային պլանում: Առավել հստակեցվել են իրականացվելիք միջոցառումները: Հաշվի առնելով, որ մեր ոլորտը ինչ-որ տեղ նաև պահպանողական է, այն ծրագրերը, որոնք գործել են 2012 և նախորդ տարիներին, կգործեն և հաջորդ տարի: Ծրագրերի գծով նվազեցման փաստեր չունենք: Թե՛ առարկայական օլիմպիադաների, թե՛ մյուս միջոցառումների ուղղությամբ թարմացումներ կլինեն: Երեխաների ամառային հանգիստն անցած տարի կազմակերպեցինք «Գանձասար» ճամբարում: Նոր տարում նաև Շուշիում կկազմակերպենք. Ավետարանչական ընկերակցության ճամբարի բազայի վրա երկու հերթափոխով կանցկացվի երեխաների հանգիստը: Նաև այդ միջոցներն են ամրագրված 2013թ. ֆինանսական փաստաթղթում: Ռազմամարզական ճամբարը նույն ձևով կգործի՝ ընդգրկելով նաև Երևանի սովորողներին: Նախատեսվում է կապերի ընդլայնում հայաստանյան դպրոցների հետ, փոխայցելություններ, ընդհանուր ծրագրերի փոխանակում:

Բուհական և միջին մասնագիտական կրթության ոլորտում նս ծրագրային դրույթներ կիրականացվեն, կշարունակվի բուհական համակարգի քննությունները թեստային, համակարգչային մեթոդով իրականացնելու գործընթացը, որն այս տարի մենք սկսել էինք մասնակի թերացումներով: Հուսանք, որ ապագայում լիարժեք կգործի այդ համակարգը: Կշարունակվի Հայաստանի և արտերկրի բուհերում մեր սովորողների համար պայմանների ստեղծումը: Մի խոսքով, անելիքները շատ են, հետամուտ կլինենք դրանց իրականացմանը:

*- Կա՞ մի ներքին կարգախոս, որով առաջնորդվում եք Ձեր աշխատանքում և, առհասարակ, կյանքում:*

- Իմ անցած ուղին ինքնին ինձ մոտ ամրակայել է մի սկզբունք՝ աշխատել միայն ու միայն ազնիվ ու նվիրված և իրականացնել բոլոր այն խնդիրները, ինչ առաջադրվում է տվյալ պաշտոնի ղեկավարին: Իմ կարգախոսը սա է՝ ծառայել իմ հայրենիքին:

*- Ձեր ակնկալիքները նոր տարուց՝ որպես նախարար, քաղաքացի:*

- Եթե տարին անցնում է խաղաղ պայմաններում, ամենակարևոր ձեռքբերումն է: Ցանկանանք, որ 2013-ը նույնպես լինի խաղաղության տարի, որովհետև միայն խաղաղ պայմաններում մենք կարող ենք աշխատել ու հասնել հաջողությունների:

Ուզում եմ այդ առթիվ շնորհավորել մեր ուսուցչությանը, գիտամանկավարժական հանրությանը, մեր սովորողներին, բոլորիս, որ, 2013 թվականը լինի ավելի բեղմնավոր, ավելի հաջողակ տարի, և կարողանանք իրականացնել բոլոր այն խնդիրները, ինչ առաջադրված են պետական ծրագրերում:

**Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

## *Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման համար ուսուցչի վարպետության մակարդակի մասին տրվող տեղեկանքի վերաբերյալ*

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի օգոստոսի 2-ի N139/Մ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին տրվող տեղեկանքը հաստատելու մասին» հրամանով հաստատված տեղեկանքը տրվում է հաստատության տնօրենի կողմից: Տեղեկանքում նշված 1-5-րդ ձևերն ընդհանրացվում, ստորագրվում ու կնքվում են նույնպես տնօրենի կողմից՝ հետևյալ պահանջների հաշվառմամբ.

1) Դասալսման ձևաթուղթը լրացվում է որակավորման տարակարգի ենթակա ուսուցչի մոտ՝ դպրոցի տնօրենի, փոխտնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մասնագետ ուսուցիչների կողմից իրականացված մի քանի դասալսումների ընդհանրացման արդյունքով, որը կատարում է դպրոցի տնօրենը՝ ձևաթղթում մտցնելով յուրաքանչյուր հարցի միջինացված միավորը՝ ձևաթղթի վերջում գրելով դասալսումներ կատարողների ընդհանուր թիվը:

2) Գործընկերոջ, սովորողի և ծնողի հարցաթերթերը լրացվում են դպրոցի տնօրենի հանձնարարությամբ և հնարավորինս շատ մասնակիցների ընդգրկմամբ: Ըստ հարցաթերթերի՝ միջինացված միավորներով ընդհանրացում կատարում է դպրոցի տնօրենը՝ ձևաթղթի վերջում գրելով հարցաթերթերը լրացնողների ընդհանուր թիվը:

3) Ընդհանրացված հարցաթերթերը ստորագրվում և կնքվում են դպրոցի տնօրենի կողմից, որոնք ուսուցչի վարպետության մակարդակի մասին տեղեկանքի հետ ներկայացվում են տվյալ ուսուցչի որակավորման տարակարգի փաստաթղթերի փաթեթում, իսկ անհատական հարցաթերթերը պահվում են դպրոցում:

4) Որակավորման տարակարգ ստանալու ցանկություն ունեցող ուսուցիչները փաստաթղթերի փաթեթը նախ ներկայացնում են շրջանների շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններ, որտեղ ստուգվում են փաստաթղթերը և համապատասխանության դեպքում առաջարկում են ներկայացնել ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն:

**Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
**ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի նախագահ**

# ՁՄԵՌ ՊԱՊԻ ՀԵՔԻԱԹԸ

2012 թվականն էլ մոտեցավ ավարտին: Դպրոցներում սկսվում են ձմեռային արձակուրդները: Երեխաների ամենասիրած ժամանակներն են, իսկ տարրական դասարաններում Նոր տարվան նվիրված հանդեսները փոքրիկներին դեպի հեքիաթային աշխարհ են կանչում:

Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում 1-4-րդ դասարաններում սովորում է շուրջ 70 աշակերտ: Եվ դեկտեմբերի 25-ին դպրոցում առաջինը հենց այս փոքրիկներն սկսեցին տոնական ցերեկույթները: Ներկա եղա 4-րդ դասարանցիների միջոցառմանը: Նելլի Սահակյանի դասարանում սովորում է 17 աշակերտ, ովքեր այս անգամ ոչ ավանդական հանդես էին պատրաստել, իրենց ծնողների և ուսուցիչների համար խաղացին «Նոր տարին օդանավակայանում» ներկայացումը:



Ֆրանսիայում վատ եղանակի պատճառով հետաձգվող թռիչքի ուղևորները տարբեր ազգերի երեխաներ են, որ շտապում էին տանը դիմավորել Նոր տարին: Ուշացումը պատճառ դարձավ, որ մանուկներն ընկերանան, բարեկամանան՝ անկախ ազգային պատկանելության, որ խոսում էին տարբեր լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն: Սպասելուց ու հոգնելուց քնեցին նրանք և երազում մասնակցեցին Նոր տարվա ուրախ տոնին: Եկավ ժամանակը, որ ինքնաթիռ նստեն: Ուղեկցորդուհին, տեսնելով, թե ինչ խաղաղ են քնած մանուկները, ափսոսում էր արթնացնել, բայց պարտավոր էր. հետ կմնային թռիչքից: Այնուհետև հնչեց ուրախ երաժշտությունը, ու այս անգամ երեխաներն իրենց պարով գեղեցիկ պահեր նվիրեցին ներկաներին: Եվս մեկ անգամ պարզ դարձավ, որ մանուկների աշխարհը հրաշքներով է միշտ լեցուն:

Շատ բան չեն ուզում մեր փոքրիկները՝ քիչ ուշադրություն և բարի ժպիտ: Նայում եմ ուրախ դեմքերով երեխաներին ու ամենակարևորը՝ ցանկանում, որ խաղաղության մեջ ու առողջ մեծանան, հասնեն իրենց երազանքին, որը, համոզված եմ, բարի է ու աստվածահաճո:

**Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ**

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

# ԲԱՆԱԿԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈԼՈՐԻՆՍ ԵՆ



*Բանակային տարին լրագրողների հետ ամփոփեց ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը: Ներկայացնելով 2012թ, Պաշտպանության բանակի կատարած աշխատանքները, նախարարն անդրադարձավ նաև նոր տարվա անելիքներին:*

2012 թվականը Պաշտպանության բանակի համար եղել է հագեցած տարի՝ կարևոր միջոցառումներով, ինչպես նաև բանակաշինության գործում զուտ ծառայողական խնդիրների կատարման ուղղությամբ:

Տարին սկսել ենք՝ նախապատրաստվելով Պաշտպանության բանակի ստեղծման, Շուշիի ազատագրման 20-ամյակի և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 67-րդ տարեդարձի տոնակատարությանը: Եռատոնը մեր ժողովուրդը նշեց մեծ շուքով ու խանդավառությամբ, հաղթողի հպարտությամբ, զորահանդեսով:

Զորահանդեսն առանձնացել է զորքերի ընդգրկվածության քանակով. առաջին անգամ մասնակցել են նաև ԼՂՀ ուժային մյուս կառույցների ստորաբաժանումները՝ սպառազինության, ռազմական տեխնիկայի նոր տեսակներ ցուցադրելով ինչպես մեր ժողովրդին, այնպես էլ մեր հակառակորդին: «Զորահանդեսը ինչպես հասարակության, անպես էլ մեր բարեկամների կողմից արժանացել է գովասանքի, իսկ մեր հակառակորդը դրանից հետո երկար ժամանակ Ղարաբաղի բանակի մասին չի խոսել»,- ասաց նախարարը:

Տարվա մյուս գլխավոր միջոցառումը հրամանատարաշտաբային զորավարժություններն էին, որոնք իրականացվել են զինված ուժերի գլխավոր շտաբի պետի գլխավորությամբ: Բանակն ամբողջությամբ ընդգրկվել է այդ զորավարժություններում, լրիվ ընթացքով ծավալվել է և զբաղեցրել մեր հիմնական կամ պահեստային դիրքերը: Գնահատականները հայկական երկու հանրապետությունների նախագահների, պաշտպանության նախարարների կողմից եղել են բարձր:

Տարին բանակի համար առանձնահատուկ էր նաև հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցման բավական ակտիվ փորձերով: Նախորդ տարվա վերլուծության արդյունքում բանակի ղեկավարության կողմից արձակված հրամանով այս տարի մեծածավալ աշխատանքներ են իրականացվել առաջին գծի ամրապնդման, հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցման բոլոր փորձերի կանխարգելման և ոչնչացման ուղղությամբ: Նախարարը փաստեց, որ այս տարի 7 դիվերսիոն-հետախուզական խմբերի փորձի արդյունքում հակառակորդին միայն մեկ դեպքում է հաջողվել մասնակի վնաս պատճառել Պաշտպանության բանակի զինծառայողներին: Մնացած վեց դեպքերում ժամանակին այդ խմբերը հայտնաբերվել են և կորուստներ կրելով՝ ետ շպրտվել իրենց մեկնարկային դիրքերը:

Հակառակորդի դիպուկահարի կողմից, ցավոք, եղել են մեր անձնակազմի խոցման դեպքեր: Ունեցել ենք 11 այդպիսի զոհ, որը ոչ թե մեր զինծառայողների կողմից մարտական հերթապահության խախտման արդյունք էր, այլ կոնկրետ հակառակորդի դիպուկահարների որակյալ աշխատանքի:

Այս տարի, իրականացված հատուկ միջոցառումների շնորհիվ այդ ցուցանիշը նվազել-հասցվել է 2-ի՝ նախորդ տարվա 11-ի փոխարեն: Ընդ որում, այս երկու դեպքերն էլ մեր զինվորների կողմից անվտանգության կանոնների խախտման հետևանք էին:Սահմանների անվտանգության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն իրենց լիարժեք արդյունքը տվել են:

Նախարարի հավաստիացմամբ՝ Արցախում այսօր Պաշտպանության բանակի բոլոր դիրքերում զինվորը կարող է հանգիստ դիտարկում իրականացնել:

Բավականին մեծ աշխատանք է կատարվել նաև ուսուցման գործընթացում՝ նոր սպայական կազմի համալրման ուղղությամբ և հիմնական շեշտը դրվում է հրամանատարների ունակությունների բարձրացման վրա: Օպերատիվ ու տարբեր հավաքների, զինված ուժերի մրցումների, հրամանատարաշտաբային զորավարժությունների ժամանակ ՊԲ դիվիզիայի, զորամասերի վարչություններն առանձնացել են բարձր գիտելիքներով և այլ դրական կողմերով, ՊԲ հրամանատարն առանձնապես ընդգծեց անձնակազմի ֆիզիկական, կրակային և մարտավարական պատրաստությունը՝ վստահեցնելով, որ այս առարկաներից մտահոգվելու տեղիք չկա: Այսօրվա զինվորը կարողանում է դաշտում ճիշտ զբաղեցնել իր կրակային դիրքը, դիպուկ կրակով խոցել հակառակորդին, ֆիզիկապես պատրաստ է, դրանից ելնելով՝ հոգեբանորեն ևս պատրաստ է իր առջև դրված խնդիրների կատարմանը:

Հաջորդ խնդիրը բանակում իրականացված՝ դաստիարակչական ոլորտին ուղղված աշխատանքներն են: Մ.Հակոբյանի խոսքով՝ՊԲ-ն այս քսան տարիների ընթացքում անընդհատ փնտրտուքների մեջ է՝ գտնելու այն բանալին, թե որտեղից են ծնվում բոլոր դժբախտ և արտակարգ պատահարները, որպեսզի կոնկրետ միջոցառումներ իրականացվեն: Նախարարի հավաստմամբ՝ այս տարի որոշակի հաջողություններ ունեցել են այդ ուղղությամբ: Անցյալ տարի ասել ու այս անգամ էլ կրկնում է, որ պատճառներից մեկը եղել է անհանդուրժողականությունը երիտասարդ սերնդի մեջ, մյուսը՝ որ դեռևս մինչև վերջին տարիներս կանոնակարգված չի եղել կարգապահությունը: Այն որևէ ղեկավար փաստաթղթի մեջ արտացոլված չի եղել: ՊԲ վարչությունում այս տարի մշակվել է 3 կարևոր փաստաթուղթ, որոնցից մեկն արդեն կիրառվում է զինված ուժերում: Դա զինվորի անհատական գրքույկն է, որտեղ լրացված են նրա բոլոր տվյալները, կատարած դրական և բացասական աշխատանքը, որը հրամանատարին հնարավորություն է տալիս ուսումնասիրել և միջոցներ ձեռնարկել զինվորի հետ կոնկրետ անհատական-դաստիարակչական աշխատանք տանելու ուղղությամբ: Մյուս կարևոր փաստաթուղթը դաստիարակության գնահատման կարգի խստացմանն է վերաբերում. զինծառայողներն ու բոլոր կարգի հրամանատարները պետք է իմանան՝ ինչ է պահանջվում իրենցից և ինչ է նշանակում՝ կարգապահության գնահատական: Այս փաստաթղթի մշակումն ավարտական փուլում է և 2013թ. կմտնի գործողության մեջ: Երրորդ փաստաթուղթը, որ մշակվել և պաշտպանության նախարարությունում քննարկման մեջ է՝ հասարակական ակտիվների գործունեության կանոնակարգումն է, որով հստակեցվում է հասարակական բոլոր ակտիվների գործունեությունը՝ ինչ նպատակ, ինչ ժամկետներում, ինչ խնդիրներ նրանք պետք է իրականացնեն: Սրանից զատ՝ ռազմական գերատեսչության ղեկավարությունը բավականին վճռական է եղել, և դեռևս անցյալ տարի հայտարարել, որ չի հանդուրժի այն վիճակը, որը տիրում է բանակի շուրջ: Հասարակության պահանջն արդարացի է: Մեծ ծավալի աշխատանք է իրականացվել այս ուղղությամբ. անցած քսան տարվա մեջ՝ այս տարի արտակարգ պատահարները նվազել են: Մահվան դեպքով արտակարգ դեպքերը նվազել են 7-ով և ամենից ցածր ցուցանիշն է՝ 19, որոնք չնայած քիչ են, բայց մտահոգիչ են, որովհետև արձանագրվել է ինքնասպանության 6 դեպք: Մահվան ելքով մնացած բոլոր դեպքերը հիվանդության պատճառով են եղել կամ դժբախտ պատահարների արդյունք՝ բանակի հետ կապ չունեցող: Իհարկե, պրոբլեմներն առաջանում են հասարակության մեջ, ընտանիքում, որը հետո տեղափոխվում է բանակ: Ցանկացած այդպիսի զարգացում հանգեցնում է տհաճ իրավիճակների: Նշվեց, որ այդ դեպքերը տեղի են ունեցել առաջին կիսամյակում: Կատարված աշխատանքների շնորհիվ երկրորդ կիսամյակում նման դեպքեր չեն արձանագրվել:

Շարունակվել են աշխատանքներն ինչպես սոցիալական ոլորտում, այնպես էլ անձնակազմի սոցիալական հարցերի լուծման ուղղությամբ: Նախարարի հեռախոսահամարը գտնվում է բոլոր զինվորների մոտ, և ինչպես նրանք, այնպես էլ քաղաքացիները կարող են զանգել:

Բոլոր զինվորներին և սպաներին տրամադրվել է արձակուրդ՝ բացառությամբ նախարարի: Միայն բանակի հրամանատարը չի կարողացել արձակուրդ գնալ՝ կապված միջոցառումների հետ: Դա դրական ազդեցություն է թողել բանակի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման վրա:

Սոցիալական ոլորտում իրականացված կարևոր քայլ է սպայական կազմի բժշկական ապահովագրությունը:

Մյուսը բնակարանաշինության և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավումն է: Կապված ֆինանսական ճգնաժամի հետ՝ վերջին 2-3 տարիներին նվազել են բանակում շինարարական աշխատանքների տեմպերը: Այս տարի նոր բնակարաններ չեն կառուցվել, բայց հիմք է դրվել ավելի խոշոր ավանի ստեղծման՝ նախկին զենիթահրետանային բրիգադի տարածքում: Եթե հաջողվի, հաջորդ տարի կավարտվեն աշխատանքները, և սպայակազմի մեծ թվով ներկայացուցիչներ կապահովվեն բնակարանով, տեղեկացրեց նախարարը:

Ամփոփելով՝ ռազմական գերատեսչության ղեկավարն ասաց, որ Պաշտպանության բանակն իր առջև դրված խնդիրներն իրականացրել է, մեր երկրի ժողովուրդը 2012 թվականն անց է կացրել անվտանգ, հակառակորդի կողմից վտանգի ավելացում չի արձանագրվել, և բանակն այսօր էլ պատրաստ է իր առջև դրված կարևորագույն խնդիրը՝ երկրի և ժողովրդի անվտանգության ապահովումն իրականացնել:

Պաշտպանության նախարարն այնուհետև պատասխանեց լրագրողների հարցերին:

Ադրբեջանի իշխանությունները վերջին շրջանում ամեն առիթով շարունակում են խոսել Ղարաբաղը ռազմական ճանապարհով վերադարձնելու մասին: Որքա՞ն է նախարարը պատերազմի վերսկսումը հավանական համարում, և ինչպե՞ս է գնահատում մեր դիրքերի պաշտպանունակությունը: Մ. Հակոբյանի պատասխանն այս է. «Ադրբեջանի իշխանություններն այսօր չէ, որ նման հայտարարություններ անում են, վաղն էլ են անելու: Որպես պաշտպանության նախարար՝ դրանք ինձ համար մտահոգիչ են և անընդհատ ազդարարում են, որ մեր խնդիրն է մշտապես մարտական պատրաստության մեջ լինել: Եվ բանակի այս տարվա բոլոր միջոցառումներն էլ հենց դրան են ուղղված եղել: Ինչ վերաբերում է հակառակորդի դիրքերի մոտիկ լինելուն, դա, իհարկե, լրացուցիչ լարվածություն է առաջացնում, և այն պատերազմը, որն Ադրբեջանն այսօր իրականացնում է ԼՂՀ-ի դեմ (Մինսկի խմբի բոլոր առաջարկություններին՝ լարվածությունն առաջին գծում թուլացնելու հարցում Ադրբեջանը պատասխանում է առաջնագծում նոր լարվածություն ստեղծելով), մտահոգիչ է: Բայց այսօր իրականացված միջոցառումների արդյունքում բոլոր զինվորներն անվտանգ են իրենց ծառայությունն անցկացնում առաջնագծում: Հրամանատարներին, բոլոր կարգի զինծառայողներին ցուցում է տրված՝՝ անընդհատ հակազդել հակառակորդին և թույլ չտալ, որպեսզի նա հայտնվի գերիշխող դիրքում»: Որպես արդյունք՝ նախարարը մատնանշեց, որ հակառակորդն այս տարվա ընթացքում այդ առումով հաջողություն չի ունեցել: Դիտարկման համակարգը բավականին կատարելագործվել է, ինչը ևս առավելություն է տվել մեզ:

«Լուսարարի» հարցին՝ Պաշտպանության և կրթության և գիտության նախարարությունների համագործակցության արդյունքում բանակ զորակոչված երիտասարդների պատրաստվածության աստիճանը տարեցտարի բարելավվո՞ւմ է, Մ. Հակոբյանը պատասխանեց. «Բանակի ամենամեծ համագործակցությունը կրթության և գիտության նախարարության հետ է, այն շուրջ 10 տարվա պատմություն ունի: Եվ ամեն տարի մենք շարունակաբար զարգացնում ենք այդ համագործակցությունը, որովհետև առաջին իսկ տարվանից մենք տեսել ենք դրա արդյունքը: ԼՂՀ-ից զորակոչված զինծառայողները տարբերվում են Հայաստանի մնացած հատվածի զորակոչվածներից, չնայած վերջին երեք տարիներից այնտեղ էլ լուրջ աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ: Այն միանշանակ իր դրական նպաստը բերում է. զինվորը գալով բանակ՝ գիտակցում է, թե ուր է գալիս և ինչի համար: Զինղեկների որակական պատրաստության առնչությամբ տարեցտարի խստացնում ենք մեր պահանջները»:

Հարցերից մեկն այս ուսումնականից ԱրՊՀ-ում ստեղծված նոր՝ նախնական զինվորական պատրաստության և ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի առնչությամբ էր: ՊԲ-ի և հիշյալ ֆակուլտետի հետ համագործակցությունը կդրվի՞ նոր մակարդակի վրա:

Նախարարի խոսքով՝ ռազմական ֆակուլտետի հիմնադրումը համալսարանում ժամանակի պահանջ էր: ԱրՊՀ-ն մեծ դերակատարություն է ունեցել Արցախյան գոյապայքարում՝ փաստելով, որ մեր հրամանատարների 70%-ը եղել են ԱրՊՀ ուսանողներ, անգամ՝ ոչ շրջանավարտներ: «Ցավով պիտի արձանագրեմ, որ համալսարանում այդ ոլորտում լուրջ անկում կա: Եվ մեր վերջին զորավարժությունում մասնակցության առումով՝ զորահավաքին ամենից վատ արդյունք ցուցաբերել է համալսարանը: Ռազմական ֆակուլտետի ստեղծումը, հուսով ենք, բեկում կմտցնի այդ ասպարեզում, և մենք ամեն ինչով կաջակցենք, որ ԱրՊՀ-ն մեր պետության առաջատարը լինի՝ ինչպես պետականաշինության, այնպես էլ բանակաշինության գործում»,- ասաց պաշտպանության նախարարը:



Զորակոչի ընթացքի մասին Մ. Հակոբյանը տեղեկացրեց, որ միջոցներ են ձեռնարկվում, որպեսզի այն ընթանա հավուր պատշաճի՝ ասելով, որ այդ կապակցությամբ ինքը հայտարարել է, որ արդարության սկզբունքը գործի, բացառվեն հեռախոսազանգերով նորակոչիկին այս կամ այն զորամասում տեղավորելը: Նախարարը վստահեցրեց, որ անձնակազմի համալրման ուղղությամբ բանակը խնդիր չունի: Իհարկե, շարունակվում է նաև պայմանագրային ձևով բանակի համալրումը:

Ինչպես ամեն տարի, այս անգամ էլ Նոր տարին մեր ռազմական գերատեսչության ղեկավարն անց է կացնելու պաշտպանական շրջանում՝ զինվորներին շնորհավորելու և շնորհակալություն է հայտնելու բարեխիղճ ծառայության համար:

Ի դեմս ասուլիսին ներկա ԶԼՄ-ների ներկայացուցիչների, նախարարը շնորհավորեց բոլոր լրագրողներին՝ Նոր տարվա և Սուրբ Ծննդի կապակցությամբ՝ շնորհակալություն հայտնելով նրանց համագործակցության համար. «Բանակի բոլոր հաջողությունները նաև ձեր շնորհիվ են: Այս տարի ՀՀ և ԼՂՀ լրագրողները բազմաթիվ այցելություններ են ունեցել բանակ և բանակից տված նյութերը, որոնք տրամադրվել են հասարակությանը, իրենց նպաստն են բերել»: Նախարարը հույս հայտնեց, որ այդ համագործակցությունը կշարունակվի նաև 2013-ին: Նա նվերներ և ծաղիկներ հանձնեց լրագրողներին:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

# ԴԻՄՈՐԴ - 2013

## 2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննությունները | | | Ոչ մրցութային քննություններ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 310102 | Ագրոնոմիա (ըստ պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով) | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| 310104 | Բույսերի պաշտպանություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| 310112 | Անտառտնտեսական գործ (ագրոպարենային համակարգում) | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 310201 | Անասնաբուժություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| 310301 | Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| 310506 | Ագրոէկոլոգիա | Մ(գ) կամ Կ(գ) | Ֆ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| 310705 | Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն | Մ(գ) | Ք(գ)** կամ Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 310801 | Գյուղատնտեսության մեքենայացում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 310901 | Հողաշինարարություն և հողային կադաստր | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311103 | Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311105 | Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն (գյուղատնտեսական և պարենամթերքի) | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311107 | Ագրոբիզնես և շուկայավարություն | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311112 | Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |

## 2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

[redacted]

## 2.4 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

[redacted]

# II. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննությունները | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն*** | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն*** | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն*** | ՆՃՊ (բ) | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Հլգ(գ) | Մ(գ) | Օտլ (գ) | |

## 1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննությունները | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ (գ) կամ Օտլ (գ) | Հլգ (գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն*** | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն*** | ՆՃՊ (բ) | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Հլգ(գ) | Մ(գ) | Օտլ (գ) | |

## 1.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

[redacted]

## 2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## 2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննությունները | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ (գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 032300 | Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080200 | Կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 230100 | Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 230200 | Տեղեկատվական համակարգեր (ըստ ճյուղերի) | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |

## 2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննությունները | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ (գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀԺՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀԺՊ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |

## 3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննությունները | | | Ոչ մրցութային քննություններ |
| 070900 | Դիզայն | Կոմ | Գծն | Գն | Հլգ(գ)* |
| 072400 | Հագուստի մոդելավորում | Կոմ | Գծն | Գն | Հլգ(գ)* |

# ԿԱՐԳ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2012 թ.
N 943-Ն

Ք. Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N210 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգը` համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգը հաստատելու մասին» N210-Ն որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ`
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«27» դեկտեմբերի 2012 թվականի
N943-Ն որոշման

### Կ Ա Ր Գ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1-ի մասի և 21-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներին համապատասխան:

2. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետ` կազմակերպություններ) ասպիրանտուրայի ընդունելության կարգը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

4. Ասպիրանտուրայի դիմորդն ավարտական տարվա ընթացքում հանձնում է օտար լեզվից և ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքներ (սահմանված ներքին շեմով` բալային գնահատումով).

1) անգլերեն լեզու-«TOEF» (ԹՈԵՖԼ), (iBT) (այԲԻԹԻ) ստորին անցումային միավորին համապատասխան.

Նախորդ տարիների մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը «TOEFL» (ԹՕԵՖԼ) ծրագրի iTP (այԹԻՓԻ) տարբերակով հանձնած վկայագրերը ուժի մեջ են 2013-2014 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության ժամանակ.

2) գերմաներեն և ֆրանսերեն լեզուներ - «on DaF» (օն ԴաՖ) և «TCF» (ԹիՍիէՖ) պահանջներին համապատասխան մակարդակով:

Մասնագիտության առանձնահատկությունից ելնելով` դիմորդը կարող է հանձնել քննություն այլ օտար լեզվից` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ` նախարարություն) թույլտվությամբ.

3) ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքներ - համակարգչից օգտվելու հմտությունների ծրագրերի նվազագույն մակարդակի պահանջներին համապատասխան:

5. Օտար լեզվից և ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների արդյունքները գործերը հանձնելիս ներկայացվում են կազմակերպությունների ընդունող հանձնաժողովներին:

6. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետ` հանձնաժողովներ): Հանձնաժողովների կազմում ընդգրկվում են կազմակերպությունում աշխատող` տվյալ մասնագիտությամբ գիտության դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտամանկավարժական և գիտական կադրեր: Համապատասխան կադրերի բացակայության դեպքում մասնագիտական հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել մասնագետներ այլ կազմակերպություններից:

7. Մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը ասպիրանտուրա ընդունվողին տալիս է կազմակերպության ընդունող հանձնաժողովը` օտար լեզվից և ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների դրական արդյունքների և ներկայացված գիտական ռեֆերատի (առնվազն 20 տպագրական էջի սահմաններում` հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունների բացակայության դեպքում) վերաբերյալ մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման կողմից գրավոր դրական գրախոսականի դեպքում:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների անցկացման ժամանակացույցը հաստատում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը և քննությունները սկսվելուց 1 շաբաթ առաջ տեղեկացնում նախարարությանը քննության անցկացման տեղի և ժամի վերաբերյալ:

8. Մասնագիտական քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդները զրկվում են ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից (8-12 միավոր` 20 բալանոց սանդղակով, 3 միավոր` 5 բալանոց սանդղակով):

9. Հարգելի պատճառով մասնագիտական քննությանը չներկայանալու դեպքում սահմանվում է նոր ժամանակացույց ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների համար` պահպանելով դրանց անցկացման համար սահմանված վերջին ժամկետը: Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը նոր ժամանակացույցի մասին տեղեկացնում է նախարարությանը:

3. ՔՆՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

10.Մասնագիտական առարկայից քննության հարցաշարը, որն ընդգրկում է ծրագրային ողջ նյութը (առնվազն 100 հարց), կազմվում է կազմակերպությունների մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ մասնագիտական հանձնաժողովի կողմից և հաստատվում կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից (տրամադրվում է դիմորդներին): Դրա հիման վրա քննությունից առնվազն 5 օր առաջ հանձնաժողովի նախագահը կազմում է առնվազն 25 հարցատոմսեր (առաջադրանքներ)` ներառելով ողջ հարցաշարը, որոնք հաստատվում են կազմակերպության կնիքով: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերահաստատվում են:

Մասնագիտական քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է կազմակերպության ընդունող հանձնաժողովը:

11.Մասնագիտական առարկայից ասպիրանտուրա ընդունվողի գիտելիքների գնահատումը կատարվում է կազմակերպության ընդունող հանձնաժողովի կողմից մշակված համակարգով` հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների առնվազն 2/3-ի ներկայությամբ: Մասնագիտական քննության անցկացումն արձանագրվում է ասպիրանտուրա ընդունվողի քննական թերթում (Ձևը կցվում է)` նշելով առաջադրված հարցերը և ստացված գնահատականը: Քննական թերթում ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի` ներկա գտնվող անդամները: Ընդունվողի գիտելիքների գնահատման մասին որոշումը ընդունվում է որպես հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականը: Մասնագիտական քննությունը հանձնված է համարվում, եթե դիմորդը ստացել է առնվազն «13» միավոր` «20» բալանոց սանդղակով, կամ առնվազն «4» միավոր` «5» բալանոց սանդղակով:

12. Դիմորդը քննության կամ ստուգարքի է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

13. Անգլերեն լեզվից «TOEFL»,գերմաներեն լեզվից «on DaF», ֆրանսերեն լեզվից «TCF» դասընթացները և տարբերակված ստուգարքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետությունում` համապատասխան պաշտոնական թույլտվություն ունեցող կազմակերպությունների կողմից:

Օտար լեզվից ստուգարքների գնահատման չափանիշները սահմանվում են վերոհիշյալ ծրագրերին համապատասխան: Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին տասնօրյակում նախարարությունը հրապարակում է տվյալ տարվա ընդունելության համար առարկայական անցումային շեմը` ըստ մասնագիտությունների (բնագիտական, տեխնիկական և հումանիտար):

14. Ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքի ծրագիրը և հարցաշարը կազմվում է նախարարության ստեղծած առարկայական հանձնաժողովի կողմից: Ստուգարքն ընդունում է Արցախի պետական համալսարանը:

15. Նշված ստուգարքները հանձնվում են ուսումնական տարվա ընթացքում` մինչև ասպիրանտուրայի ընդունելության հայտարարությունը: Ստուգարքներից «անբավարար» գնահատական ստացած դիմորդը կարող է դրանք վերահանձնել մինչև ընդունելության գործերի հանձնումը:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

16. Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները` ըստ հերթականության.

1) օտար լեզվից և ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (գումարային ձևով),

2) հրատարակված գիտական աշխատանքների քանակը,

3) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,

4) մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության և դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,

5) միջազգային, հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում, օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

---

**ՁԵՎ**
**ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎՈՂԻ**
**ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ**

Անուն, հայրանուն, ազգանուն ______________________

Գիտական հիմնարկը ______________________________

1. Մասնագիտական առարկա

Առարկայի անվանումը__________ Քննության հանձնման ամսաթիվը ____________

| Առաջադրված հարցերը | Գնահատականները |
|---|---|
| 1.______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| 2.______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| 3.______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |

Կ. Տ.

Ընդհանուր գնահատականը ________________

Հանձնաժողովի նախագահ` ________________

Հանձնաժողովի անդամներ` ________________

2. Օտար լեզուներ

___________ լեզվից Քննության հանձնման ամսաթիվը

______________________

| Առաջադրված հարցերը | Գնահատականները |
|---|---|
| 1.______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| 2.______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| 3.______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |

Կ. Տ.

Ընդհանուր գնահատականը ________________

Հանձնաժողովի նախագահ` ________________

Հանձնաժողովի անդամներ` ________________

3. Ինֆորմատիկայի ու համակարգչից Օգտվելուհիմունքներ(ստուգարք) — Քննության հանձնման ամսաթիվը

______________________

______________________
(ստուգված, չստուգված)

Կ.Տ.

Հանձնաժողովի նախագահ` ________________

Հանձնաժողովի անդամներ` ________________

---

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«28» դեկտեմբերի 2012 թ. N77/Ա
ք. Ստեփանակերտ

2013-2014 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության քննությունների անցումային շեմերը հաստատելու մասին

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի N 943-Ն որոշումով հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի» 13 կետի պահանջով

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ***

1. Սահմանել օտար լեզուներից, ինֆորմատիկա և համակարգչից օգտվելուհիմունքներից տարբերակված ս տուգարքների հետևյալ անցումային շեմերը.

1) Անգլերեն լեզու – 54 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 61 միավոր /հումանիտար- հասարակագիտական/, 79 միավոր /հումանիտար-բանասիրական/:

2) ֆրանսերեն լեզու – 200 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 300 միավոր /հումանիտար- հասարակագիտական/, 400 միավոր /հումանիտար-բանասիրական/:

3) գերմաներեն լեզու - 60 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 80 միավոր /հումանիտար- հասարակագիտական/, 100 միավոր /հումանիտար-բանասիրական/:

4) ինֆորմատիկա և համակարգչից օգտվելուհիմունքներ - 35 միավոր /բնագիտական, տեխնիկական/, 25 միավոր /հումանիտար-հասարակագիտական/, 20 միավոր /հումանիտար- բանասիրական/:

2. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ Լ. Ղարախանյանին` 5-օրյա ժամկետում հրամանի մասին տեղեկացնել բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին:

3 . Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Սարգսյանին:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

ՎԵՐՋԻՆ ԷՋ

# ԿՅԱՆՔԸ ԿԵՐԿԱՐԻ, ԵԹԵ ՆՐԱՆԻՑ ՀՄՏՈՐԵՆ ՕԳՏՎԵՆՔ

Առողջությունը մարդու երջանկության և ուրախության գլխավոր գործոններից է: Ահա ինչու մարդու համար առաջնահերթ խնդիր է պահպանել իր առողջությունը:

Գաղտնիք չէ, որ մեր մոլորակն էկոլոգիական աղետ է ապրում, առաջացել են հիվանդությունների նոր տեսակներ: Ինչպե՞ս Երկիր մոլորակը փրկել էկոլոգիական աղետից և կանխել հիվանդությունները: Առաջին հերթին պետք է ստեղծել հոգեկան ու ֆիզիկական կենսակերպի նոր որակ՝ առողջ ապրելակերպ, որը ճիշտ օրենքներով և սկզբունքներով ապրելաձևն է: Հասարակության, մասնավորապես դպրոցի առջև լուրջ ու հրատապ խնդիրներ են դրված՝ արժևորել առողջ ապրելակերպը և վերաբերմունք ձևավորել դեպի շրջակա միջավայրը:




Այդ նպատակն էր հետապնդում Ստեփանակերտի h. 5 հիմնական դպրոցում անցկացված միամսյակը: Դասղեկական ժամերին կազմակերպվել են զրույցներ և ֆիլմերի դիտում «Առողջ հոգին՝ առողջ մարմնում», «Առողջությունն անփոխարինելի գանձ է», «Առողջ մարդը բնության ամենաթանկ ստեղծագործությունն է» թեմաներով: Դպրոցում գործող «Պատանի նկարիչ» խմբակի աշակերտների լավագույն նկարներից կազմակերպվել է ցուցահանդես: Միամսյակը՝ նվիրված առողջ ապրելակերպին, ասես համեմվեց 9-րդ «բ» դասարանի աշակերտների կազմակերպած համաքաղաքային միջոցառմամբ: Նրանք բեմադրեցին «Վատ սովորություններին ասենք՝ ոչ» «դատական նիստը». որի ժամանակ դատեցին մարդկային արատներին՝ հարբեցողությանը, ծխելուն և թմրամոլությանը:

Միջոցառման ընթացքում աշակերտները պատմեցին, թե ինչ կործանարար ազդեցություն ունեն ալկոհոլը, ծխախոտը և թմրանյութերը մարդու օրգանների, ամբողջ օրգանիզմի վրա: Ծխախոտի տևական ներգործությունից տուժում են համարյա բոլոր օրգանները, ամեն մի կենդանի բջիջ ենթարկվում է լուրջ և անվերադարձ փոփոխությունների:

Հայտնի է, որ հանցագործությունների 50 տոկոսը կապված է ալկոհոլի գործածման հետ: Ծնողների ալկոհոլիզմի համար հաճախ հատուցում են երեխաները: Երբեք ալկոհոլամոլ չի դառնա այն մարդը, որը չի կորցնում չափի զգացումը. չէ՞ որ ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ:

Ալկոհոլամոլներն ու թմրամոլները պոտենցիալ հանցագործներ են: Ալկոհոլն ու թմրանյութերն ազդում են գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի վրա, որի հետևանքով մարդու բարձրագույն նյարդային գործունեությունը խանգարվում է:

«Դատական նիստի» վերջում դատարանը որոշեց, որ խմելը, ծխելը, թմրանյութեր օգտագործելը վատ սովորույթներ են մեր կյանքում, դրա փոխարեն անհրաժեշտ է զբաղվել սպորտով, շրջապատի էկոլոգիական մաքրությամբ, դպրոցական հողամասերը մշակել, ծառ ու ծաղիկ աճեցնել, գիրք կարդալ, տեղ ու ժամանակ չթողնել վատ սովորությունների համար:

- 21-րդ դարի մարդը պետք է ավելի քան սթափ լինի և ապրի առողջ կյանքով: Մենք պետք է ստեղծենք առողջ ապրելակերպ ոչ միայն մեզ համար, այլև մեր սերունդների: Եվ եթե այս միջոցառումից հետո գոնե մեկ պատանի ո՛չ կասի այդ արատավոր սովորույթներին, կհամարեմ նպատակային,- ասում է միջոցառման կազմակերպիչ, կենսաբանության ուսուցչուհի Մարինե Խաչատրյանը:

Ընկերների, բարեկամների հետ եղեք շիտակ ու անկեղծ, ուրախ ու ժպտերես, քանի որ դրական հույզերն ու բարձր տրամադրությունն առողջ ապրելակերպի կարևորագույն նախապայմաններից են: Եղեք ուրախ և առողջ:

**Ռենա ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**Ստեփ. h. 5 հիմն.**
**դպրոցի փոխտնօրեն**

# ՔԵԶ ՄԵՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ՄՈՌԱՆԱ...



Կյանքից անժամանակ հեռացավ մեր ընկերը, հրաշալի մարդն ու մանկավարժը, հայրենասեր քաղաքացին ու հայրենիքի զինվորը:

Շուրջ 40 տարի Սեյրան Նիկոլայի Բաղրյանը աշխատել է Հաթերքի Բ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի ուսուցիչ, իսկ վերջին տարիներին՝ զինղեկ:

Դրանք եղել են նվիրումի, ինքնայրման, ինքնահաստատման տարիներ, որոնց ընթացքում նա հասցրել էր մեկական անկյուն զբաղեցնել իր սաների, գործընկերների, յուրաքանչյուր հաթերքցու սրտում: Նրան սիրում էին բոլորը՝ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը, թե՛ հեռու երկրներում ապրող համագյուղացիները: Ու այդ սերը նա վաստակել էր մարդկային բարձր որակներով՝ մեղմ հումոր, կարեկցանք, զորավիգ լինելու անսահման ցանկություն, իր հայրենիքի յուրաքանչյուր խնդրի համար տառապող բոցավառ անհատականություն:

Ծնվել է 1949թ., Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում՝ ծառայողի ընտանիքում: Օջախի միունճարն է եղել, և ծնողները ոչինչ չեն խնայել որդու կրթության ու դաստիարակության համար:

1970թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում: Եղել է դպրոցի կազմակերպիչ, փոխտնօրեն, տնօրեն:

Արցախյան գոյամարտի տարիներին գրիչը փոխարինել է զենքով՝ հետևելով «Երբ որոտում են գնդացիրները, մուսաները լռում են» իմաստությանը:

Բազմաթիվ մարտական գործողությունների է մասնակցել, ծանր վիրավորվել է, իսկ զինադադարից հետո նորից վերադարձել դպրոց, շարունակել սիրած գործը:

Հայրենիքը արժանվույնս է գնահատել հրաշալի մանկավարժի, նվիրված ազատամարտիկի գործը և նրան արժանացրել «Արիության համար», «Երախտագիտություն» մեդալների:

Գլուխ ենք խոնարհում մեր ընկեր Սեյրան Բաղրյանի հիշատակի առջև՝ համոզված, որ նա միշտ կմնա իր սաների, գործընկերների հիշողության մեջ:

*Հաթերքի Բ. Գրիգորյանի անվան*
*միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

# ԱՆԳԻՐ ՍՈՎՈՐԻ՛Ր ՈՒ ՄԻՇՏ ՀԻՇԻ՛Ր

1. Չորս բան անգին է՝ գիտությունը, առողջությունը, ազատությունը և առաքինությունը:

2. Չորս բան արդարություն չեն ճանաչում՝ սերը, ատելությունը, վախը և շահը:

3. Չորս բան հնարավոր չէ գողանալ՝ գիտությունը, կամքը, արհեստը և խելքը:

4. Չորս բան չպետք է մոռանալ՝ առատաձեռնությունը հարատևել չի կարող, իմաստությունը միշտ չէ, որ օգնում է, ճոռոմաբանությունն էլ երբեմն հաղթվում է, չափավորությունը երբեք իրեն չի կորցնում:

5. Չորս բան պետք է իմանալ՝ ամեն մի ձեռնարկումից առաջ՝ հարկավո՞ր է, հաճելի՞ է, օգտակա՞ր է, ժամանակի՞ն կկատարվի:

6. Չորս եղանակով պետք է լսել՝ մտերմությամբ, լռությամբ, համբերությամբ, հնազանդությամբ:

7. Չորս ձևով պետք է ունկնդրել՝ համբերությամբ, լսածի մասին խոհեմությամբ դատելով, մտքի մեջ բարին ունենալով և ոչ պիտանին շուտափույթ մոռացության տալով:

8. Չորս բան պարտավոր է անել սովորողը՝ լսել մտերմաբար, ընթերցել մտադիր, սովորածը սովորեցնել ուրիշներին, գրի առնել իմացածը:

9. Չորս բանի մարդ ձգտում է և չի հասնում՝ մեծ հարստության, կատարյալ գիտության, տևական հանգստության և տևական ուրախության:

10. Չորս խորհուրդ, որ չպետք է մոռանալ՝ տես, լսիր, լռիր և համբերիր:

**Հավաքեց ու կազմեց**
**Միքայել ԲԱԼՅԱՆԸ**

*Մարզական*

# ՈՒԺԱՅԻՆ ԵՌԱՄԱՐՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 21-23-ը Ստեփանակերտի h. 7 հիմնական դպրոցի մարզադահլիճում ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախազորակոչային տարիքի պատանիների միջև կայացան «Ուժային եռամարտի» հանրապետական մրցումներ՝ նվիրված ԼՂՀ սահմանադրության օրվան:

Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը, բացի Շահումյանի շրջանից:

Ծրագրով նախատեսված էին հետևյալ մրցաձևերը.

- ձգումներ պտտաձողի վրա,
- ծանրաքարի բարձրացում,
- բազկամարտ:

Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր 5 տղա, որոնք պետք է մասնակցեին 3 մրցաձևերին:

Մրցումների հանդիսավոր բացման ժամանակ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ՌՀ, ՖԴ և ՀԿՀԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը, ողջունելով մասնակիցներին, արժևորեց նման մրցումների կազմակերպումը՝ որպես ռազմամարզական կարևոր միջոցառում ֆիզիկապես ուժեղ հայրենիքի պաշտպաններ պատրաստելու գործում:

Առաջին օրն անցկացվեցին ձգումներ պտտաձողի վրա և ծանրաքարի բարձրացում մրցաձևերը, իսկ երկրորդ օրը մասնակիցները մրցեցին բազկամարտ մրցաձևից:

Ծավալված համառ և անզիջում մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողներին:

Թիմային հաշվարկով առաջին տեղը գրավեց Մարտունու շրջանի թիմը, երկրորդ տեղը՝ Մարտակերտի շրջանի, երրորդ տեղը՝ Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմերը:

Անհատական առաջնությունում եռամարտի արդյունքներով առաջին տեղը զբաղեցրեց Արմեն Հարությունյանը՝ Մարտունու շրջանի Թաղավարդի դպրոցից, երկրորդ տեղը՝ Սամվել Մոսյանը՝ Հադրութի շրջանի Տումու դպրոցից, երրորդ տեղը՝ Արմեն Մովսիսյանը՝ Ասկերանի շրջանի Նորագյուղի դպրոցից:

Ձգումներ պտտաձողի վրա վարժությունում հաղթող ճանաչվեց Վարդան Մաղաքելյանը՝ Ստեփանակերտի h. 11 ավագ դպրոցից: Ծանրաքարի բարձրացում մարզաձևում առաջինն էր Գոռ Օհանյանը՝ Մարտունու շրջանի Ճարտարի h.1 դպրոցից: Բազկամարտ մարզաձևում բոլորին գերազանցեց Արմեն Մովսիսյանը՝ Ասկերանի շրջանի Նորագյուղի դպրոցից:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների, պատվոգրերի, թանկարժեք նվերների և դրամական պարգևների:

Պատվոգրերի և դրամական խրախուսանքի արժանացան նաև առանձին մրցաձևերում մրցանակային տեղեր գրաված տղաները:

Ձեռքի ժամացույցներով պարգևատրվեցին մրցանակային տեղեր գրաված Մարտունու, Մարտակերտի շրջանների և Ստեփանակերտ քաղաքի հավաքականների մարզիչները:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը:

**Մուրադ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

ԼՈՒՍԱՐԱՐ
*Խմբագիր՝*
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
**«Լուսարար»**
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3205: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.12.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի օգոստոսի «23»-ի
Պետականգրանցման համարը 10512126
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ն. Նարիմանյան

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**
«16» օգոստոսի 2012 թվականի N 145/Ն
ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**
«18» օգոստոսի 2012 թվականի N 246 -Ն
ք. Ստեփանակերտ

# Հ Ա Մ Ա Տ Ե Ղ   Հ Ր Ա Մ Ա Ն

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 512-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան`

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը` համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին`սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն` պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Կարապետյանին:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զորամասերի պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

☞10

## ԽՈՍՔ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

☞12

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11☜

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԴ, ՔՈՒՅՐԻԿՍ

## Ո՛Չ՝ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Վանա լիճ

ՇՈՒՇԻԻ ԿԻՐՃՈՒՄ